ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№_____ «_____» _____ 2022թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 6311-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի N 4329-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219^1-րդ, 244^9-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով.

1. Հաստատել Երևանի քաղաքապետի կողմից քննվող վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով, բացառությամբ սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված վարչական իրավախախտումների վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության օրինակելի ձևը՝ համաձայն հ.1 հավելվածի:

2. Հաստատել Երևանի քաղաքապետի կողմից քննվող «Գովազդի մասին» օրենքի 26–րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության օրինակելի ձևը՝ համաձայն հ.2 հավելվածի:

3. Ընդունել ի գիտություն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ (բացառությամբ 2-րդ, 3-րդ, 12-րդ, 17-րդ, 19-րդ, 23-րդ, 26-րդ, 29-րդ, 30-րդ և 35-րդ մասերի) հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունների օրինակելի ձևերը հաստատված են Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2007 թվականի ապրիլի 12-ի թիվ 93-Ն հրամանով:

4. Սահմանել, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթակա է հատուկ համարակալման և հաշվառման Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գործերի կառավարման և սպասարկման վարչության կողմից:

5. Ընդունել ի գիտություն, որ սխալ կազմված կամ վնասված, հետագա օգտագործման համար ոչ պիտանի արձանագրությունները խոտանված են համարվում՝

դրանց խոտանման վերաբերյալ համապատասխան արձանագրություն կազմելով և հաշվառումից դուրս հանելով, տվյալ արձանագրությունը կազմողի կամ արձանագրությունը կազմած աշխատակցի անմիջական պատասխանատու ղեկավարի բացատրության հիման վրա՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գործերի կառավարման և սպասարկման վարչության կողմից:

6. Այն դեպքում, երբ դեռևս չկազմված արձանագրությունը կորել է, ապա բացատրագիրը ներկայացվում է այն անձի կողմից ում հանձնման-ընդունման ակտով տրամադրվել է այդ արձանագրությունը:

7. Այն դեպքում, երբ դեռևս չկազմված արձանագրությունը վնասվել է, ապա բացատրագիրը ներկայացվում է այն անձի կողմից ում կողմից վնասվել է այդ արձանագրությունը:

8. Սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված անձանց բացակայության դեպքում համապատասխան բացատրագիրը ներկայացվում է այն ստորաբաժանման ղեկավարի կամ այն վարչական շրջանի ղեկավարի կողմից, որին հանձնվել է արձանագրությունը:

9. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին և Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին՝ մինչև 2022 թվականի սեպտեմբերի 19-ը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գործերի կառավարման և սպասարկման վարչությանը ներկայացնել իրենց կողմից ստացված և չօգտագործված հերթական համարակալմամբ բոլոր արձանագրությունները:

10. Հանձնարարել սույն որոշման 9-րդ կետում նշված անձանց՝ ստացված և չօգտագործված արձանագրությունների վերադարձման անհնարինության դեպքում՝ կազմակերպել այդ արձանագրությունների խոտանման գործընթացը սույն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան:

11. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գործերի կառավարման և սպասարկման վարչության պետին՝

1) սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով հաստատված արձանագրությունների տպագրումը և մինչև 2022 թվականի սեպտեմբերի 8-ը հանձման-ընդունման ակտին համապատասխան դրանց հանձնումը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումներին և Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին.

2) սույն որոշմամբ հաստատված վարչական իրավախախտումների վերաբերյալ չօգտագործված և համարակալված արձանագրությունների սահմանված կարգով ոչնչացումը:

12. Երևանի քաղաքապետի 2009 թվականի հունիսի 19-ի N 6311-Ա և 2012 թվականի հունիսի 5-ի N 4329-Ա որոշումները ճանաչել ուժը կորցրած:

13. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գործերի կառավարման և սպասարկման վարչության պետի վրա:

14. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

15. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրը, բացառությամբ 1-ին, 2-րդ, 3-րդ և 12-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2022 թվականի սեպտեմբերի 12-ից:

Recoverable Signature

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1
Երևանի քաղաքապետի 2022 թվականի
օգոստոսի ---- N ----- –Ա որոշմամբ

Երևանի զինանշանի պատկերը

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ Ա-000000

ք. Երևան «_____» _____ 20 թ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219 [1]–րդ, 244 [9]–րդ և 255–րդ հոդվածներով.

Ես՝ _____

(պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

_____

հայտնաբերել եմ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի _____ նախատեսված

_____

(նշել հոդվածի համարը և անվանումը)

_____

_____

_____

_____

իրավախախտումը։

Հայտնաբերված իրավախախտման փաստի առթիվ կազմված է սույն արձանագրությունը հետևյալի մասին, որ

_____

(իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Իրավախախտումը կատարվել է _____

_____

_____

_____

_____

(տեղեկություններ խախտում կատարած ֆիզիկական անձի մասին, անունը, հայրանունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման վայրը, պաշտոնատար անձի անունը, հայրանունը, ազգանունը, պաշտոնը, կազմակերպության անվանումը, կազմակերպական–իրավական ձևը, գտնվելու վայրը և (կամ) հասցեն)

Արձանագրությունը կազմեց՝ _____

_____

_____

_____

(արձանագրողի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(ստորագրություն)

Իրավախախտում կատարած անձ՝ _____

_____

(անուն, հայրանուն, ազգանուն)

_____

(ստորագրություն)

_____

(ստորագրելուց հրաժարվելու դեպքում նշել շարժառիթները)

_____

_____

(կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը)

Վկաներ և (կամ) տուժողներ՝ _____

_____

_____

_____

(անուն, հայրանուն, ազգանուն, բնակության վայր)

_____

(ստորագրություն)

Իրավախախտում կատարած անձին բացատրվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267–րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները: Ստացա սույն արձանագրության 2–րդ օրինակը՝ իրավախախտում կատարած անձ _____

(անուն, հայրանուն, ազգանուն)

_____

(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 2
Երևանի քաղաքապետի 2022 թվականի
օգոստոսի ---- N ----- –Ա որոշմամբ

Երևանի զինանշանի պատկերը

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԳԱ-000000

ք. Երևան «_____» _____ 20 թ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 254–րդ, 255–րդ հոդվածներով և «Գովազդի մասին» օրենքի 26–րդ հոդվածով.

Ես՝ _____

(պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

_____

հայտնաբերել եմ «Գովազդի մասին» օրենքի 26-րդ հոդվածի _____ կետով նախատեսված

_____

(նշել 26-րդ հոդվածի կետի համարը և անվանումը)

_____

_____

_____

_____ իրավախախտումը։

Հայտնաբերված իրավախախտման փաստի առթիվ կազմված է սույն արձանագրությունը հետևյալի մասին, որ

_____

(իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Իրավախախտումը կատարվել է _____

_____

_____

_____

_____

_____

(տեղեկություններ խախտում կատարած ֆիզիկական անձի մասին, անունը, հայրանունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման վայրը, պաշտոնատար անձի անունը, հայրանունը, ազգանունը, պաշտոնը, կազմակերպության անվանումը, կազմակերպական–իրավական ձևը, գտնվելու վայրը և (կամ) հասցեն)

Արձանագրությունը կազմեց՝_____

_____

_____

_____

(արձանագրողի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(ստորագրություն)

Իրավախախտում կատարած անձ՝ _____

_____

(անուն, հայրանուն, ազգանուն)

_____

(ստորագրություն)

_____

(ստորագրելուց հրաժարվելու դեպքում նշել շարժառիթները)

_____

_____

(կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը)

Վկաներ և (կամ) տուժողներ՝ _____

_____

_____

_____

(անուն, հայրանուն, ազգանուն, բնակության վայր)

_____

(ստորագրություն)

Իրավախախտում կատարած անձին բացատրվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267–րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները: Ստացա սույն արձանագրության 2–րդ օրինակը՝ իրավախախտում կատարած անձ _____

(անուն, հայրանուն, ազգանուն)

_____

(ստորագրություն)

Կ. Տ.